ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՏՆՕՐԵՆ

ք.Երևան «22» սեպտեմբերի 2025թ.

ՀՐԱՄԱՆ N 162-Լ

ՖԻԼՄԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի հունվարի 18-ի «Վարձութային վկայական տրամադրելու և դրա գործողությունը դադարեցնելու, ֆիլմը դասակարգելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը հաստատելու մասին» N 92-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 33-րդ կետի պահանջով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ նշումների ձևաչափերը՝ համաձայն սույն հրամանի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ի:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏՆՕՐԵՆ՝ **ԴԱՎԻԹ ԲԱՆՈՒՉՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի կինոյի հիմնադրամի տնօրենի
2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 162-Լ հրամանի

ՖԻԼՄԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՉԱՓԸ

1. Կատեգորիա «Ը» (Ընդհանուր) - նախատեսված է ցանկացած տարիքի դիտողի համար

1) Քառակուսի, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ կատեգորիայի **Ը** նշանը: Գունային համադրությունը՝ կանաչ ֆոն սպիտակ տեքստով:

2) Ուղղանկյուն, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ տեքստային նախազգուշացում՝ **Նախատեսված է ցանկացած տարիքի դիտողի համար:** Գունային համադրությունը՝ սև ֆոն սպիտակ տեքստով:



2. Կատեգորիա «ԾՈՒ» - խորհուրդ է տրվում դիտել ծնողների ուղեկցությամբ, նախատեսված է 8 և ավելի տարիքի անձանց համար

1) Քառակուսի, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ կատեգորիայի **ԾՈՒ** նշանը: Գունային համադրությունը՝ դեղին ֆոն սպիտակ տեքստով:

2) Ուղղանկյուն, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ տեքստային նախազգուշացում՝ **Խորհուրդ է տրվում դիտել ծնողների ուղեկցությամբ**: Գունային համադրությունը՝ սև ֆոն սպիտակ տեքստով:



3. Կատեգորիա «12ԾՈՒ» - նախատեսված է 12 և ավելի տարեկան անձանց համար: 12 տարեկանից ցածր անձանց խորհուրդ է տրվում դիտել ծնողի ուղեկցությամբ.

1) Քառակուսի, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ կատեգորիայի **12ԾՈՒ** նշանը: Գունային համադրությունը՝ նարնջագույն ֆոն սպիտակ տեքստով:

2) Ուղղանկյուն, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ տեքստային նախազգուշացում՝ **Նախատեսված է 12 և ավելի տարեկան անձանց համար**: Գունային համադրությունը՝ սև ֆոն սպիտակ տեքստով:



4. Կատեգորիա «15» - նախատեսված է 15 և ավելի տարեկան անձանց համար.

1) Քառակուսի, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ կատեգորիայի **15** նշանը: Գունային համադրությունը՝ վարդագույն ֆոն սպիտակ տեքստով:

2) Ուղղանկյուն, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ տեքստային նախազգուշացում՝ **Նախատեսված է 15 և ավելի տարեկան անձանց համար:** Գունային համադրությունը՝ սև ֆոն սպիտակ տեքստով:



5. Կատեգորիա «18» - նախատեսված է 18 և ավելի տարեկան անձանց համար.

1) Քառակուսի, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ կատեգորիայի **18** նշանը: Գունային համադրությունը՝ կարմիր ֆոն սպիտակ տեքստով:

2) Ուղղանկյուն, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ տեքստային նախազգուշացում՝ **Նախատեսված է 18 և ավելի տարեկան անձանց համար:** Գունային համադրությունը՝ սև ֆոն սպիտակ տեքստով:



6. Կատեգորիա «21» Արգելված է 21 տարին չլրացած անձանց համար:

1) Քառակուսի, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ կատեգորիայի **21** նշանը: Գունային համադրությունը՝ կապույտ ֆոն սպիտակ տեքստով:

2) Ուղղանկյուն, որը իր մեջ ներառում է ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ տեքստային նախազգուշացում՝ **Արգելված է 21 տարին չլրացած անձանց համար»** Գունային համադրությունը՝ սև ֆոն սպիտակ տեքստով:



7. Ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ նշումների ձևաչափերը անհրաժեշտ է օգտագործել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի հունվարի 18-ի «Վարձութային վկայական տրամադրելու և դրա գործողությունը դադարեցնելու, ֆիլմը դասակարգելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը հաստատելու մասին» N 92-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-40-րդ կետերով նախատեսված դեպքերում և կարգով:

8. Դիտողի ուշադրությունը առավել գրավելու համար ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ կատեգորիայի նշանը և տեքստային նախազգուշացումը կարող են օգտագործվել միաժամանակ:

9. Ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ կատեգորիայի նշանի համար կիրառման ենթակա քառակուսու լայնության և երկարության չափերի հարաբերությունն է 1:1:

Ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ տեքստային նախազգուշացման համար կիրառվող ուղղանկյան լայնության և երկարության չափերի հարաբերությունն է 1:2:

10. Ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ նշումը պետք է լինի ընթեռնելի: Ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ նշումը պետք է լինի տեսանելի մասում, իսկ էկրանի վրա ֆիլմի ցուցադրության դեպքում՝ էկրանի կենտրոնում:

11. Ֆիլմի դասակարգման և տարիքային սահմանափակման վերաբերյալ նշումը կատարվում է համակարգչային «Գրապալատ» տառատեսակով: